ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 նոյեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

158
(2638)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 127

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ մանիպուլացնում է Արցախյան հակամարտության թեման: Օրինակ՝ նոյեմբերի 2-ին նա խորհրդարանում խոսեց Արցախի կարգավիճակի մասին եւ նշեց, թե այդ բառը փորձել է մի կողմ դնել:

«Համաձայնել ենք ռուսաստանցի մեր գործընկերների հետ, որ հիմա չարժե գնալ եւ փորձել լուծել այդ թեման, որովհետեւ դա կբերի անխուսափելի ճգնաժամի, եւ այստեղ է, որ ուրախ եմ. ես կարող եմ հիմա սա ասել: Հաջորդ խնդիրը, որի մասին հրապարակային ասել էի եւ հետահայաց եմ ուզում ասել՝ մենք նաեւ առաջարկեցինք, որ հենց Սոչիում՝ տեղում որոշում կայացվի Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսաստանցի խաղապահների մանդատը երկարացնել անորոշ ժամանակով՝ 20 տարով, 15 տարով, 5 տարով եւ այլն», - նշել է նա՝ հավելելով, որ այդ առաջարկը չընդունվեց, բայց հարցը դարձավ օրակարգային: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանը նշում է, թե ինքը չի խոսում Արցախի կարգավիճակից, որովհետեւ ռուս գործընկերներն են առաջարկել ԼՂ կարգավիճակի թեման հետաձգել անորոշ ժամանակով, սակայն 2022 թվականի ապրիլի 23-ին Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարեց. «Միջազգային հանրությունն առաջարկում է մի փոքր իջեցնել Արցախի կարգավիճակի նշաձողը»: Նախ նկատենք՝ այստեղ որեւէ խոսք չկար ռուսական կողմի մասին, մյուս կողմից էլ, երբ նա խոսում էր նշաձողն իջեցնելու մասին, չէր ասում, որ այն պատրաստվում են քննարկել ավելի ուշ: Ստացվում է՝ նա հերթական անգամ մանիպուլացնում է բանակցությունների եւ Ացախյան հակամարտության թեման եւս:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահ, ԱԺ ՔՊ խմբակցության նախկին պատգամավոր Վահագն Հովակիմյանի երկու որդիները Հայոց բանակում չեն ծառայել: «Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 21-ին պաշտոնական գրություն էր ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն եւ ուղղել հետեւյալ հարցերը. «Արդյոք Միսակ Վահագնի Հովիակիմյանը եւ Նարեկ Վահագնի Հովիակիմյանը անցե՞լ են պարտադիր զինվորական ծառայություն, թե՞ ոչ: Եթե այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ եւ ի՞նչ հիմքով»: Եվ, ահա, նոյեմբերի 3-ին «Ժողովուրդ» օրաթերթը ստացավ Պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Բատիկյանի անունից պատասխան, որում ասվում է. «Հայտնում եմ, որ Միսակ Վահագնի Հովակիմյանը եւ Նարեկ Վահագնի Հովակիմյանն օրենքով սահմանված հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից»: Միեւնույն ժամանակ հղում անելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին՝ ՀՀ ՊՆ-ն մերժել է տրամադրել ԿԸՀ նախագահի որդիների՝ բանակից ազատման պատճառները: Անկախ պատճառներից՝ պետք է արձանագրենք, որ եթե Վահագն Հովակիմյանը իշխանական պատգամավոր չլիներ, դժվար թե նրան հաջողվեր որդիներին ազատել պարտադիր զինվորական ծառայությունից: Ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը կասեր՝ ոնց է լինում, որ պաշտոնյաների որդիներն են միայն հիվանդ կամ ուսման ծարավ լինում եւ այդ երկու հիմքերից մեկով ազատվում բանակից: Բայց դե հիմա Նիկոլ Փաշինյանը դարձել է վարչապետ եւ իրերն ու երեւույթները այլ կերպ է մեկնաբանում: Հավելենք, որ ՔՊ-ականների շարքում շատ են բանակից ազատման դեպքերը, հատկապես՝ առողջական խնդիրների հիմնավորումներով:



«Ժողովուրդ» օրաթերթը երեկ էր գրել, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ վարչության անդամների՝ խայտառակ կերպով կազմակերպված ընտրություններից հետո վարչության կազմից դուրս են մնացել փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանն ու ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար, նախկինում ԼՀԿ-ական եղած, Էդմոն Մարուքյանի սանիկ Հայկ Կոնջորյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կուսակցության ներսում գործել է մի խումբ, որը կորդինացրել է ընտրությունները. խմբի անդամները 4-ն են եղել՝ պատգամավորներ Արփի Դավոյանը, Վիլեն Գաբրիելյանը, Տրդատ Սարգսյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը: Կուսակցական ընտրությունների կեղծիքների մասին բարձրաձայնել են շատերը ներսում, այդ թվում՝ պատգամավոր Թագուհի Ղազարյանը՝ բողոքելով, որ Արփի Դավոյանը կեղծիքներ է կազմակերպում: Արփի Դավոյանը ճնշումներ է գործադրել՝ ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի միջոցով ազդելով մարզային իշխանությունների վրա: Կոնկրետ հրահանգ է եղել Նիկոլ Փաշինյանի անունից՝ ում ընտրել, ում ոչ մի դեպքում չընտրել: Արսեն Թորոսյանը, Ալեն Սիմոնյանը, Մարիա Կարապետյանը, Էդուարդ Աղաջանյանը եղել են սեւ ցուցակում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ ներսում ընտրությունների բողոքարկման գործընթացը կորդինացրել է Արսեն Թորոսյանը, եւ կայացած վերահաշվարկից հետո հենց ինքը եւ ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը անցել են վարչության կազմ, իսկ Կոնջորյանն ու փոխվարչապետ Մաթեւոսյանը դուրս են մնացել ցուցակից: ՔՊ-ական կեղծիքների մասին դեռ էլի հրապարակումներ կունենանք:

Կոռուպցիան եւ կաշառակերությունը մերժող հեղափոխական իշխանությունների ներկայացուցիչների մեծ մասը, որ նախկինում ոչ մի սեփականություն չի ունեցել, ավտոմեքենաների եւ տների սեփականատերեր են դարձել: ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ կան, որ նախկինում 100 դրամով երթուղայիններով էին երթեւեկում, հիմա ավտոմեքենաներ են վարում: Այս կարեւոր իրողությունը ինչո՞ւ է վրիպում ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ուշադրությունից: Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում վստահեցրեց, որ չի վրիպել ոչինչ իրենց ուշադրությունից: «Այս պահին կոնկրետ Ազգային ժողովի պատգամավորների բիզնես ներգրավվածության մասով ուսումնասիրությունները ընթացքի մեջ են: Արդյունքները մենք ինքներս ենք հրապարակելու, եւ կարող է վարույթներ լինեն»: Այսինքն՝ նշանակում է, որ կան պատգամավորներ, որոնք բիզնեսի մեջ են ներգրավված, սակայն թաքցրել են այն, ու առաջիկայում հետաքրքիր բացահայտումներ են սպասվում: ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի հետ բացառիկ հարցազրույցը կներկայացնենք այսօր՝ Armlur.am լրատվական կայքում:

ՄԵԿՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

-Տիկին Թովմասյան, սեպտեմբերի 13-ից անցել է ավելին քան մեկ ամիս, բայց առ այս պահը հայկական կողմը չթաղված դիակներ ու անհետ կորածներ ունի: Ադրբեջանը չի համաձայնում վերադարձնել հայ զինծառայողների դիակները, եւ, հետեւաբար, ի՞նչ պետք է եւ կարող են անել պատկան մարմինները, որ հապաղում ու չեն անում:

-Նախ՝ ցանկանում եմ արձանագրել, որ, այո, մենք սեպտեմբերի ագրեսիվ հարձակումից հետո ունենք անթաղ դիակներ, որոնք գտնվում են Հայաստանի տարածքում՝ օկուպացված Ադրբեջանի կողմից: Մինչ այս պահը, ըստ պաշտոնական տեղեկատվությունների, ինչ-ինչ ջանքեր գործադրվում են՝ թույլ տալու, որ մեր զինծառայողները մոտենան եւ իրենց գուծընկերների դիերը տեղափոխեն, հողին հանձնեն, բայց այս առումով առայժմ դեռ տեղաշարժ չունենք: Ես կարծում եմ՝ միակ ու ամենաէական բանը, որ կարող էր անել գործող իշխանությունը, այն է, որ Նիկոլ Փաշինյանը, մինչեւ հումանիտար հարցերը չլուծվեն, նոր փաստաթղթեր չպետք է ստորագրի: Նա առաջին հերթին պետք է հումանիտար խնդիրների կարգավորման պահանջ դներ Սոչիում՝ օրերս տեղի ունեցած հանդիպումից առաջ: Նույնիսկ պատերազմների ժամանակ հումանիտար դադարներ են արվում, երկուստեք դիերը փոխանակում, ապա նորից շարունակվում է պատերազմը: Դիերի փոխանակման հարցը անլուծելի հարց չէ, հետեւաբար պետք է շատ արագ զբաղվել դրանցով: Մինչեւ այս պահը մենք չգիտենք անգամ, թե Սոչիի հանդիպման ժամանակ Փաշինյանն Ադրբեջանի իր գործընկերոջը նման պահանջ առաջադրել է, թե ոչ: Ավելին՝ ցանկանում եմ՝ արձանագրենք նաեւ, որ 2020-ի 44-օրյա պատերազմից հետո՝ առ այսօր, դեռ ունենք անհետ կորածներ, որոնց դիերի որոնումն այս տարվա հունվար ամսից առհասարակ դադարեցվել է: Հայաստանի Կարմիր խաչի գրասենյակի ղեկավարի հետ վերջին հանդիպման ժամանակ շոշափեցի այդ հարցը, ու նա ցավով արձանագրեց, որ ադրբեջանական կողմը թույլ չի տալիս, որ իրենք գնան եւ Արցախի օկուպացված տարածքներում որոնողական աշխատանքներ իրականացնեն:

-Տիկին Թովմասյան, փաստացի թե՛ 44-օրյա պատերազմից, թե՛ սեպտեմբերի 13-ի մեկօրյա պատերազմից հետո հայկական կողմն առ այսօր անհետ կորածներ, գերիներ, անհողաթումբ շիրիմներ ունի: Այս ամենի մասին թե՛ Դուք, թե՛ Ձեր գործընկերները խոսում են, բարձրաձայնում են, ահազանգում եմ միջազգային հարթակներում կամ միջազգային գործընկերների հետ հանդիպումների ժամանակ: Այդքանից հետո, սակայն, Ադրբեջանը շարունակում է մեծ-մեծ, հոխորտալից տոնով խոսել:

-Ըստ էության, այո, Ձեր կողմից նշված 2 պատերազմներից հետո՝ մինչեւ այսօր, կան թե՛ անթաղ դիակներ, որանք ուղղակի մնացել են հողի վրա, ու թե՛ գերիներ՝ պահվող Ադրբեջանի բանտերում: Ցավալիորեն, Ադրբեջանի կողմից Արցախի եւ Հայաստանի օկուպացված տարածքներ նույնպես կան: Դրանք բոլորը թեեւ ընդունում են, որ օկուպացվել են Բաքվի կողմից, բայց որեւէ մեկը գործնականորեն այնպիսի մի քայլ չի անում, որ Ադրբեջանը պատժվի ու ստիպված լինի իր զորքը հետ քաշել ՀՀ սուվերեն տարածքից: Իմ միջազգային բոլոր հանդիպումների ժամանակ (վերջինը՝ Կանադայում) բարձրաձայնել եմ այդ հարցը, որ՝ եթե դուք՝ բոլորդ, ընդունում եք, որ Ադրբեջանը ագրեսոր է եւ ներխուժել է, զավթել է Հայաստանի որոշ տարածքներ, ապա այդ դեպքում ինչո՞ւ գործնական քայլեր չեք իրականացնում Ադրբեջանին պատժելու համար. չէ՞ որ բոլորս տեսնում ենք, թե ինչպես է ամբողջ աշխարհը Ռուսաստանին պատժում Ուկրաինայի դեմ պատերազմ սկսելու համար, եւ ամբողջ աշխարհն Ուկրաինայի կողքին է կանգնած: Ինչո՞ւ եք Ադրբեջանին ագրեսոր ճանաչում, բայց չեք պատժում թե՛ Ադրբեջանին, թե՛ Ալիեւին: Սա անարդար է, սա երկակի ստանդարտ է, եւ մենք պետք է հասնենք նրան, որ ամբողջ աշխարհը հասկանա, որ օր առաջ պետք է պատժվի Ադրբեջանը: Համենայնդեպս, ես իմ տեղում իմ ջանքերը գործադրում եմ եւ բոլորի մոտ բարձրաձայնում եմ այս խնդիրի մասին: Հայաստանում ներկայացված դիվանագետների հետ հանդիպումների ժամանակ նույնպես շոշափում եմ այս հարցը՝ բոլորից ակնկալելով նույնպիսի արձագանք՝ պատիժ ագրեսորի եւ պատերազմական հանցագործի նկատմամբ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԻ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» գործող օրենքում փոփոխություններ կարվեն: Այդ նախագիծն առաջարկել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը:

Այսպիսով, ՀՀ ազգային անվտանգության ծառայության ենթասպայական եւ սպայական կազմերի զինծառայողների սահմանային տարիքի շեմը կբարձրացվի 2 տարով:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է ազգային անվտանգության մարմիններում ծառայության ժամկետը մինչեւ 10 տարով երկարաձգելու հնարավորությունը նախատեսել նաեւ ազգային անվտանգության մարմիններում բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար:

Օրենքի 26-րդ հոդվածում՝ կադրերի տրամադրության տակ թողնելու հիմքերում առաջարկվում է լրացնել նաեւ ծառայողին, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, պաշտոնից ազատելու դեպքը: Միաժամանակ, կադրերի տրամադրության տակ ծառայողին թողնելու կարգը կսահմանվի ՀՀ ԱԱԾ տնօրենի հրամանով, որի համար օրենքով կնախատեսվի համապատասխան լիազորող նորմ: Հստակեցվում են նաեւ պաշտոնից ազատելու հիմքերը:

28-րդ հոդվածում առաջարկվում է սահմանել սպաների եւ ենթասպաների պարտադիր ատեստավորման միեւնույն պարբերականություն՝ 5 տարին մեկ անգամ: Բացի այդ, նախատեսվում է սահմանել արտահերթ ատեստավորման անցկացման հնարավորություն՝ ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների ղեկավարների հիմնավորված զեկուցագրերի հիման վրա պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ:

47-րդ հոդվածում հստակեցվում են ծառայությունից արձակելու հիմքերը, եւ որպես ծառայությունից արձակելու հիմք առաջակվում է նախատեսել նաեւ ծառայողի կողմից դիտավորյալ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարելը, եթե նրա նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել, կամ այն դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով: Այս դեպքում լիազոր մարմնի ղեկավարի կողմից որոշում կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքները պարզելու նպատակով պարտադիր անցկացվելու է ծառայողական քննություն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՔՊ-ՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության՝ օրեր առաջ ընտրված կազմը փոփոխվել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխող կուսակցության վարչության անդամի ընտրության արդյունքները վերհաշվարկվել են, ինչից հետո պատկերը փոխվել է: Մեր տեղեկություններով՝ վերահաշվարկից հետո ԱԺ համանուն խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն ու ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը դուրս են մնացել վարչության կազմից, քանի որ պատգամավոր Արսեն Թորոսյանի ու ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանի ստացած քվեներն ավելի շատ են եղել, հետեւաբար նրանք էլ անցել են վարչություն: Փաստորեն, իշխող քաղաքական թիմն անգամ սեփական կուսակցության վարչության ընտրությունները չի կարողանում կազմակերպել ու նմանօրինակ խայտառակ իրավիճակում է հայտնվում:

ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Չնայած Հայաստանի ճգնաժամային իրավիճակին՝ մայրաքաղաքում արդեն մեկնարկել է ամանորյա տրամադրությունը: ArmLur.am-ը տեսախցիկը ֆիքսել է գլխավոր տոնածառի տեղադրման նախապատրաստական աշխատանքները: Հիշեցնենք, որ տոնածառը Հանրապետության հրապարակում կտեղադրվի սովորականից ավելի վաղ: Տեղեկությունը հայտնում է Երեւանի քաղաքապետարանի մամուլի ծառայությունը: Նշվում է, որ որոշումն ուղղակի չի ընդունվել: Մի կողմից՝ քաղաքային իշխանություններն իրականացնելու են մեծամասշտաբ ամանորյա լուսավորության նախագիծը, մյուս կողմից՝ Երեւանում անցկացվելու է 2022 թվականի «Մանկական Եվրատեսիլը»: «Այս կապակցությամբ մեր քաղաքը բազմաթիվ հյուրեր է ընդունելու. Ամանորին ընդառաջ՝ կենտրոնական տոնածառի մոնտաժման աշխատանքները կսկսվեն սովորականից ավելի վաղ»,... ասված է հաղորդագրությունում: Ավանդույթի համաձայն՝ տոնածառը Հանրապետության հրապարակում տեղադրվում է դեկտեմբերի 20-ից հետո: Տոնածառերը տեղադրվում են նաեւ մայրաքաղաքի վարչական շրջաններում: Հիշեցնենք, որ «Մանկական Եվրատեսիլ» երգի 20-րդ հոբելյանական մրցույթը տեղի կունենա Երեւանում 2022 թվականի դեկտեմբերի 11-ին:

20 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ՊՆ-ԻՆ

Նախագծերից մեկով ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն առաջարկում է վերաբաշխում կատարել «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Որոշման նախագծով առաջարկվում է 20 մլն դրամի չափով գումար ուղղել Պաշտպանության նախարարության կողմից իրականացվող «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի «ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավում» միջոցառման շրջանակներում «Շենքերի եւ շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվող ծախսերի ֆինանսավորմանը:

Այսպիսով, շենքերի եւ շինությունների պայմանների բարելավման համար ՊՆ-ն ծրագրում է ծախսել 20 մլն դրամ: Այս որոշումը կհանգեցնի ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի ավելացման՝ 16 մլն 704 հազար դրամի չափով:

ԱՐԴՅՈՒՆՔ ՏՎԵՑ

«Ինչի համար պայքարում էինք, արդյունք տվեց»,- ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարեց Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Խիթարյանը՝ անդրադառնալով՝ բուհերի միավորման նախագծին:

«Վստահ եմ, որ նոր գործընթացների սկսման դեպքում անպայման մեզ կներառեն, որպեսզի մենք մեր դիտարկումները ներկայացնենք: Մենք ոչ թե դեմ ենք միավորման գաղափարին, այլ դեմ ենք, որ մեր բուհը դիտարկվի միայն ուսուցիչ պատրաստող բուհ: Մենք սպասարկում ենք սպորտը եւ դրան վերաբերող առարկաները: Մենք դեմ ենք, որ որեւիցե բուհի միանանք. խնդիրը Բրյուսովն ու Մանկավարժականը չէ: Մենք ներոլորտային բուհ ենք եւ մեզ ուրիշ բուհի մեջ չենք տեսնում»,-ասաց ռեկտորը: Խիթարյանի խոսքով՝ ԿԳՄՍ Նախարարի հետ հանդիպմանը հնչեցրել է իր դիտարկումները եւ հուսով է, որ դրանք կներառվեն առաջիկա քննարկումների մեջ:

«Հույսով եմ, որ մեր դիտարկումները հաշվի կառնվեն, եւ մեր բուհի կրթական ծրագրերը ամբողջությամբ կպահպանվեն, ինչը մեզ համար կարեւոր է. մնացածն ընթացքում կերեւա»,-հավելեց նա:

Հիշեցնենք, որ ավելի վաղ հայտնել էինք, որ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հաստատել է, որ իսկապես կա Բրյուսովի անվան համալսարանը, Մանկավարժական համալսարանը եւ Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը միավորելու Կառավարության որոշման նախագիծ, ինչից հետո մոտ երկու շաբաթ Բրյուսովի ուսանողները բողոքի ակցիա էին իրականացնում վերոնշյալ նախագծին:

ԿԼԻՆԵՆ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում առաջընթաց կա, խոսակցությունը շարունակվում է»,- հայտարարեց ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2023 թ պետբյուջեի նախագծի քննարկմանը՝ անդրադառնալով պատգամավորների հարցերին: «Հանրահայտ է, որ գործընթացն առանց նախապայմաններ է, եւ, միեւնույն ժամանակ, թուրքական կողմն անընդհատ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման հետ է կապում, որը ինչ-որ առումով ինքնին մի քիչ նախապայման է հիշեցնում: Այնուամենայնիվ, այս հայտարարություններին զուգահեռ շատ կոնկրետ քննարկումներ են ընթանում, առաջին հերթին՝ հատուկ ներկայացուցիչների մակարդակում, բայց նաեւ այդ մակարդակից դուրս՝ մասնագիտական որոշակի ներգրավվածությամբ»,- ասաց Միրզոյանը: ԱԳ նախարարը հայտնեց, որ խոսակցությունը մի քանի կոնկրետ քայլերի մասին է, այդ թվում՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց համար սահմանի բացման, ինչպես նաեւ երրորդ երկրների քաղաքացիների համար սահմանի բացման վերաբերյալ:

«Կարող եմ ասել, որ առաջընթաց կա, խոսակցությունը շարունակվում է: Եվ կարող եմ ասել նաեւ, որ ակնկալում եմ ու հույս ունեմ, որ դրական արդյունքներ կլինեն մոտ ապագայում»,- եզրափակեց Միրզոյանը:

ՀՌՉԱԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐՈՎ Է ՄԻԱՑԵԼ

44-օրյա պատերազմից հետո, երբ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հարաբերություններ հաստատելու եւ հաշտության գնալու մասին սկսեց խոսվել, հղում է արվում 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնցով կողմերը ժամանակին ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 7-ին Պրահայում Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ կայացած քառակողմ հանդիպման արդյունքում հայտարարություն է ընդունվել, որում ասվում էր. «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմա Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Նրանք հաստատեցին, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար, եւ որ այդ հանձնաժողովների հաջորդ նիստը կկայանա Բրյուսելում մինչեւ հոկտեմբերի վերջ: Հայաստանն իր համաձայնությունը հայտնեց՝ խրախուսելու ԵՄ քաղաքացիական առաքելությունը Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով: Ադրբեջանը համաձայնեց համագործակցել նշյալ առաքելության հետ այնքանով, որքանով որ առնչություն կունենա: Առաքելությունն իր աշխատանքները կսկսի հոկտեմբերին առավելագույնը երկու ամիս ժամկետով: Առաքելության նպատակը կլինի վստահության կառուցումը եւ իր զեկույցների միջոցով սահմանային հանձնաժողովներին աջակցելը»:

Ալմա Աթայի հռչակագիրն ընդունվել է 1991 թվականի դեկտեմբերի 21-ին, դրանով արձանագրվեց ԽՍՀՄ փլուզումը, եւ այսօր միջազգայնորեն ընդունված է, որ Խորհրդային Միությունը փլուզվել է դեկտեմբերի 21-ին:

Հայաստանն ամեն դեպքում այս հռչակագրին միացել է վերապահումներով. 1992 թվականի փետրվարի 18-ին կայացվել է ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը՝ 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի, Ռուսաստանի (ՌԽՖՍՀ) եւ Ուկրաինայի ստորագրած Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագրի վավերացման մասին: Ընդհանուր առմամբ ներկայացված է եղել տասը վերապահում: Դրանցից մեկով, օրինակ, ԳԽ-ն առաջարկել է վերաշարադրել համաձայնագրի 5-րդ հոդվածը, որում նշվում է. «Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում եւ հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը»:

ԳԽ-ն առաջարկել է այն շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում եւ հարգում են ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, միմյանց տարածքային ամբողջականությունը եւ սահմանների անձեռնմխելիությունը»:

Իսկ համաձայնագրի 13-րդ հոդվածում նշվում է, որ այն «բաց է ԽՍՀՄ անդամ բոլոր պետությունների առջեւ», ԳԽ-ն առաջարկել է լրացնել «այդ թվում ԽՍՀՄ-ի նախկին ինքնավար կազմավորումների համար, որոնք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին» հռչակագրի ընդունումից առաջ անցկացրել են անկախություն հռչակելու վերաբերյալ համաժողովրդական հանրաքվե:

Նկատենք՝ Արցախի ինքնորոշման հանրաքվեն տեղի է ունեցել ավելի վաղ, քան ընդունվել է այս հռչակագիրը, այսինքն՝ հռչակագիրն ընդունելու պահին Արցախն արդեն անկախ էր:

Հավելենք, որ ԱՊՀ-ին, բացի Բելառուսից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից, միացել են եւս 8 հանրապետություններ, որոնք են Ադրբեջանը (1993 թվականի սեպտեմբերի 24), Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը: Վրաստանը ԱՊՀ-ին միացել է 1993 թվականի դեկտեմբերին: Բալթյան երկրները (Լատվիա, Լիտվա եւ Էստոնիա) հրաժարվել են ստորագրել ինչպես Ալմա Աթայի, այնպես էլ Բելովեժյան համաձայնագիրը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՄՆԱԳՑԵԼՈՒ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Շվեդիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր, Շվեդիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Արին Կարապետին, որը Երեւան է ժամանել՝ մասնակցելու Համաշխարհային հայկական առաջին գագաթնաժողովին:

Արին Կարապետը նախ իր տպավորություններով է կիսվել Համաշխարհային հայկական առաջին գագաթնաժողովից եւ գոհունակությամբ ընդգծել աշխատանքների, տեղի ունեցող քննարկումների արդյունավետ անցկացման փաստը: Շվեդիայի խորհրդարանի հայազգի պատգամավորը կարեւորել է տարբեր երկրների խորհրդարանների հայ պատգամավորների միջեւ մշտական կապերի ստեղծումն ու ամրապնդումը, ինչը կնպաստի արտերկրում հայանպաստ գործունեությանը:

Կարեւորվել է Շվեդիա-Հայաստան բարեկամական խմբի ակտիվ գործունեությունը, երկու երկրների միջեւ ավիահաղորդակցության կազմակերպմանն ուղղված քայլերի իրականացումը: Քննարկվել են երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր:

Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, Համաշխարհային հայկական առաջին գագաթնաժողովն ամենամյա դարձնելու հնարավորություններին վերաբերող հարցեր:

ՎՏԱՆԳԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Ընթացիկ տարվա իրադարձությունները ցույց տվեցին, որ ՀԱՊԿ-ին անհրաժեշտ է օպտիմալացնել ճգնաժամային իրավիճակներին արձագանքման մեխանիզմը, այս հարցի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը պատրաստ է եւ համաձայնեցվում է: Հինգշաբթի ԱՊՀ երկրների անվտանգության խորհուրդների քարտուղարների նիստում այս մասին հայտարարել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովը. փոխանցում է ՏԱՍՍ-ը:

Սեմերիկովն ընդգծել է, որ աշխարհակարգի վերափոխման ներկա շրջանը դարձել է միավորման պետությունների համար կայունության ամենալուրջ փորձությունը: Նրա խոսքով՝ Արեւմուտքը Կիեւին դրդում է հակամարտության սրմանը՝ չնայած ուկրաինական կողմի բոլոր կորուստներին, սակայն ՀԱՊԿ պատասխանատվության գոտում լարվածության այլ օջախները նույնպես աջակցություն են ստանում:

Այսպիսով, պահպանվում է Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Ղրղզստանի եւ Տաջիկստանի միջեւ էսկալացիայի եւ դիմակայության վտանգը. նշել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ

ԱԱԾ-Ն ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

«Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություններ կկատարվեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԱԾ-ի կողմից առաջարկվում է արդիականացնել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը: Վերջինս ընդունվել է 1996 թվականին, եւ հիմնավորման մեջ նշվում է, որ դրանում առկա մի շարք իրավակարգավորումներ չեն արտահայտում ներկա իրողությունները, ինչպես նաեւ արդի միջազգային փորձը:

Ավելին, վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» նոր օրենքի նախագծի մշակման եւ հարակից իրավական ակտերի արդիականացման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից հիշյալ որոշման մեջ նշված պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված առաջարկությունների հիման վրա էլ մշակվել է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի նախագիծը:

Այսպիսով, նախագծով նախ առաջարկվում է «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը վերանվանել «Պետական գաղտնիքի մասին»: Այս կապակցությամբ նախագծում այլեւս չի կիրառվում «ծառայողական գաղտնիք» հասկացությունը, եւ «Գաղտնի» դրոշմագիր ունեցող տեղեկությունները եւս կդասվեն պետական գաղտնիքի շարքին:

Մասնավորապես, նախագծով առաջարկվում են պետական գաղտիքին առնչվող հասկացությունների հետեւյալ սահմանումները.

1) պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ (գաղտնի տեղեկություններ). ցանկացած տեղեկություն, արտադրանք կամ նյութ, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է համապատասխան դրոշմագիր (նշում), պաշտպանվում է պետության կողմից, եւ որի տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին,

2) պետական գաղտնիք. Հայաստանի Հանրապետության ռազմական կամ արտաքին հարաբերությունների կամ տնտեսության, գիտության եւ տեխնիկայի կամ հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկությունները, արտադրանքը կամ նյութերն են, որոնք սույն օրենքի համաձայն պահպանվում եւ պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին,

3) սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն. Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց, պաշտոնատար անձանց գործունեությանն առնչվող տեղեկություններ, որոնք, սույն օրենքի համաձայն, չեն դասվում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին, սակայն դրանց տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին քաղաքական եւ տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքներին եւ օրինական շահերին: Այդ տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, արտադրանք կամ նյութեր, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը,

4) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների կրիչներ (այդ թվում՝ էլեկտրոնային) (այսուհետ՝ նաեւ տեղեկակիրներ). նյութական օբյեկտներն են, որոնցում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններն արտահայտվում են պատկերների, պայմանանշանների, ազդանշանների, տեխնիկական լուծումների, գործընթացի կամ այլ ձեւերով,

5) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածում. պետության պաշտպանության տակ գտնվող եւ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակում կամ հոսակորուստ,

6) հրապարակում. պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկացած ձեւով մատչելի դարձնելն է այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն կամ իրավասություն չունեցող անձանց,

7) հոսակորուստ. պետության պաշտպանության տակ գտնվող եւ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների կորուստ,

8) գաղտնագրում. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանության նպատակով պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառում,

9) գաղտնազերծում. պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածման նկատմամբ օրենքով սահմանված կարգով սահմանափակումների վերացում,

10) գաղտնիության ռեժիմ. պետական գաղտնիքի պաշտպանության եւ պահպանության նպատակով համալիր միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումը կամ հուսակորուստը կանխելուն,

11) պետական գաղտնիքի պաշտպանություն. լիազոր մարմնի համակարգմամբ Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց ուժերի ու միջոցների կիրառում՝ ուղղված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, արտադրանքների եւ նյութերի հրապարակումը եւ հոսակորուստը կանխելուն,

12) պետական գաղտնիքի պահպանություն. օրենսդրությամբ նախատեսված իրավական, կազմակերպչական, ինժեներատեխնիկական, ծրագրային եւ այլ անհրաժեշտ միջոցների ու մեթոդների համակարգված կիրառում,

13) գաղտնիության աստիճան. տեղեկությունների կարեւորությունը, դրանց տարածմամբ հնարավոր հետեւանքների առաջացումը եւ տեղեկության մատչելիության սահմանափակումը բնութագրող ցուցիչ, որով որոշվում են համապատասխան տեղեկության պահպանության ուղղությամբ իրականացվող միջոցառումները,

14) պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն. ֆիզիկական անձանց կողմից գաղտնի տեղեկություններին ծանոթանալու եւ օգտագործելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տրված թույլտվություն,

15) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանության միջոցներ. գաղտնի տեղեկությունների պահպանության համար նախատեսված ինժեներատեխնիկական, ծրագրային, ինչպես նաեւ գաղտնի տեղեկությունների պահպանության արդյունավետության վերահսկմանն ուղղված այլ միջոցներ,

16) գաղտնիության դրոշմագիր. վավերապայման, որը դրվում է տեղեկակիրների եւ (կամ) դրանց ուղեկցող փաստաթղթերի վրա եւ վկայում է տեղեկակիրներում առկա տեղեկությունների գաղտնիության աստիճանի մասին,

17) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործում. այդպիսի տեղեկությունների հավաքումը կամ պահպանումը կամ փոխանցումը կամ գաղտնազերծումը,

18) պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվել. անկախ իրականացման ձեւից եւ եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ կապված ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է այդպիսի տեղեկությունների ստեղծման, ամրագրման, համակարգման, հավաքման, վերամշակման, փոխանցման, փոխանակման, տեղափոխման, պահպանման, պաշտպանության, օգտագործման, ծանոթացման, հաշվառման, գաղտնիության աստիճանի փոփոխման, գաղտնազերծման, արխիվացման, ոչնչացման կամ այլ գործողություններ կատարելու հետ,

19) լիազոր մարմին. ազգային անվտանգության հարցերով լիազորված պետական մարմին,

20) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ոչնչացում. պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների մասնակի կամ ամբողջական վերականգնման հնարավորության բացառում,

21) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգություն. այնպիսի կացություն, երբ ապահովված է անձի, հասարակության եւ պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական եւ հոգեւոր արժեքների, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին եւ արտաքին սպառնալիքներից:

Առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ գաղտնիության աստիճաններին համապատասխան՝ պետական գաղտնիքի տեղեկակիրներին տրվում են «Հատուկ կարեւորության», «Հույժ գաղտնի» եւ «Գաղտնի» դրոշմագրեր:

Նախագծով ընդլայնվել են տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումները, մասնավորապես՝ պետական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել նաեւ պետության կողմից քաղաքացիներին, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների եւ սոցիալական երաշխիքների վերաբերյալ տեղեկությունները:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՈՍԿՈՒ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ջարինա Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի ընթացքում վաճառելու նպատակով «Վաղարշ եւ որդիներ» ՍՊ ընկերության կողմից վստահված ոսկյա զարդերից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 12.571.000 ՀՀ դրամի ոսկյա զարդեր:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նոյեմբերի 2-ին՝ ժ.19.05-ին, Տ. Ա.-ն, որը Ավան-Առինջի բնակիչ է, ինքնասպանություն է գործել՝ ցած նետվելով Դավիթաշենի կամրջից:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 04.40-ին, հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ կտրած-պատռած վերքով բուժօգնության է տեղափոխվել 29-ամյա երիտասարդ: Ըստ բժշկի տեղեկանքի՝նա ի վիճակի չէ բացատրություն տալու:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ սիսիանցի երիտասարդը մարմնական վնասվածքը ստացել է Տերյան փողոցի սրճարաններից մեկում. անձնական հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ նրան բաժակով խփել էր 49-ամյա մի կին:

Ժամը 05:00-ին 49-ամյա կինն ու վիճաբանության մասնակից նրա 26-ամյա դուստրը Մինսկի փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Կենտրոնական բաժին:

Նախապատրաստված նյութերն ուղարկվել է նախաքննական մարմին:

ԿԵՂԾ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ֆինանսավարկային եւ մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնում ստացվել էին տեղեկություններ կեղծ վարորդական վկայականներ տրամադրելու վերաբերյալ, որոնց հիման վրա Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ:

Հետագա համատեղ գործողությունների արդյունքում ձեռք բերվեցին փաստական տվյալներ, որ մի խումբ անձինք չարաշահել են չորս քաղաքացու վստահությունը եւ հափշտակել խոշոր չափերով գումար՝ խարդախության հետեւյալ մեխանիզմով: Առանց քննության վարորդական իրավունքի վկայականներ ստանալու պատրվակով նրանք քաղաքացիներից պահանջել էին 125-ից 250 հազար դրամ, այնուհետեւ տրամադրել վարորդական իրավունքի կեղծ վկայականներ՝ հափշտակելով ընդհանուր 875 հազար դրամ:

Քրեական վարույթի շրջանակներում իրականացվել են մի շարք դատավարական գործողություններ, հայտնաբերվել են վարորդական իրավունքի կեղծ վկայականներ, երկու անձ էլ ձերբակալվել է: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

Ի դեպ, սա վարորդական իրավունքի վկայականներ ստանալու հետ կապված խարդախության առաջին դեպքը չէ: Մեր քաղաքացիներին հորդորում ենք վարորդական իրավունքի վկայական ձեռք բերել բացառապես օրինական ճանապարհով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 73 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Տավուշի մարզպետարանի աշխատակազմը խիստ ուռճացած է: Մարզում ընդամենը երկու ոլորտ՝ հանրակրթությունը եւ առողջապահությունը ղեկավարող մարզպետարանի աշխատակազմն ունի 88 հաստիք՝ մարզպետ, մարզպետի երկու տեղակալ, մարզպետի երկու օգնական, մարզպետի երկու տեղակալների օգնականներ, մարզպետարանի գլխավոր քարտուղար, գլխավոր քարտուղարի տեղակալ, վարչությունների պետեր, բաժնի վարիչներ, գլխավոր մասնագետներ, ավագ մասնագետներ, մասնագետներ, քարտուղար, 2 վարորդ, 4 հավաքարար, պարետ, պահակ, կաթսայատան վարիչ: Ըստ Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքի՝ մարզպետարանի աշխատողների 88 հաստիքներից ներկայումս թափուր են 12-ը: Տավուշի մարզպետարանի աշխատակազմը 2022 թվականի ընթացքում պետական բյուջեից ստանալու է 88 միլիոն 92 հազար 700 դրամի չափով պարգեւատրում: Նոյեմբերյան խոշորացված համայնքի Բարեկամավան փոքր գյուղը հեռավոր, սահմանամերձ, վտանգավոր գոտում է: Երկու տարի է, ինչ Բարեկամավանի միջնակարգ դպրոցի տանիքի նորոգումը (որը կատարվել է Ստավրոպոլում բնակվող բարեկամավանցիների հանգանակած փողերով) կիսատ է մնացել, անձրեւաջրերը լցվում են դպրոցի շենք: Արդեն երկու տարի Բարեկամավանի բուժկետի տանիքի կեսը չկա, այն պոկվել է ուժգին քամուց, անձրեւաջրերը լցվում են ներս, բուժկետում հակասանիտարական ահավոր վիճակ է, պատերի վերեւի անկյուններում մեծ բորբոսներ են: Այդպիսի ահավոր պայմաններում է բուժկետի բուժքույրն աշխատում, այդ պայմաններում բարեկամավանցիները բուժգնություն են ստանում, դեղորայք է պահվում: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բերդավան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման համար «Բերդավան» բարեգործական հիմնադրամը աշխատանքներ է կատարում: Հիմնադրամին գումարներ են նվիրաբերում արտերկրում, Երեւանում, Հայաստանի այլ վայրերում, Բերդավանում բնակվող բերդավանցիները: Հիմնադրամը 2022թ. օգոստոսին սկսել է Բերդավանի միջնակարգ դպրոցի շենքի մասնակի բարեկարգման աշխատանքները, որոնք շարունակական բնույթ են կրելու: Արդեն ավարտվել է շենքի առաջին հարկի եւ երկու մասնաշենքերն իրար կապող միջանցքի պատերի ու առաստաղի վերանորոգումը: Հիմնադրամը հաջորդ փուլում նախատեսում է իրականացնել դպրոցի բակի ասֆալտապատման, առաջին հարկի ողջ տարածքի հատակի սալապատման, դպրոցի ընդհանուր վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթի կազմման աշխատանքները: Այդ գործերը կատարելու համար հիմնադրամը գումարներ նվիրաբերելու կոչով դիմել է բերդավանցիներին: Հայտնի չէ, թե որ նվաճումների համար պետական բյուջեում ավելի քան 88 միլիոն դրամ կա Տավուշի մարզպետարանի աշխատողներին պարբերաբար պարգեւատրելու համար, իսկ սահմանագոտու պետական կարեւոր հիմնարկների՝ Բարեկամավանի դպրոցի եւ բուժկետի տանիքների, Բերդավանի դպրոցի վերանորոգման համար պետբյուջեում գումարներ չկան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՆԱՃ՝ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հայաստանում կյանքն օր օրի թանկանում է: Ի դեպ, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ հացի շուկայում այս հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, արձանագրվել է գնաճ: Այս տարվա հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, սննդամթերքը զգալի թանկացել է: Վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ մեկ տարվա ընթացքում սննդամթերքի ոլորտում գնաճը կազմել է 12.5 տոկոս, իսկ հոկտեմբերին, սեպտեմբեր ամսվա համեմատ, այն թանկացել է 0.3 տոկոսով: Հայաստանի 8 քաղաքներում հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.1-0.5 տոկոսով, իսկ 3-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Երեւանում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.5 տոկոսով: ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեկ տարվա ընթացքում ոչ միայն ալյուրն է թանկացել, այլեւ բրինձը, մակարոնեղենը, ձավարեղենը: Օրինակ՝ հնդկացորենը (գրեչկա) 23.2 տոկոսով է թանկացել:

Ի դեպ, փաթեթավորված կես կիլոգրամ հնդկացորենի գինը կազմում է շուրջ 800 դրամ, իսկ մեկ կիլոգրամի արժեքը 1600 դրամը գերազանցում է: Որակյալ բրձնի մեկ կիլոգրամի արժեքը սկսում է 780 դրամից, բայց փաթեթավորված բրնձի գինն ավելի բարձր է՝ 900 դրամից սկսած: Իսկ մակարոնը մեկ տարվա ընթացքում թանկացել է 30.3 տոկոսով: Նշենք, որ Վիճակագրական կոմիտեն արձանագրել է, որ այս տարվա հոկտեմբերին, սեպտեմբեր ամսվա համեմատ, բրձնի գինը նվազել է 0.4, մակարոնինը՝ 0.3 տոկոսով:

Հացն է թանկացել. ըստ Վիճակագրական կոմիտեի՝ այս տարվա հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, հացի գինն աճել է 18.8, իսկ սեպտեմբերի համեմատ՝ 0.3 տոկոսով: Կարագի շուկայում եւս գնաճ է արձանագրվել, եւ սա՝ այն դեպքում, երբ դոլարի փոխարժեքը ցածր է:

Սովորաբար դոլարի փոխարժեքի բարձրացման հետեւանքով Հայաստանում որոշ ապրանքներ թանկանում են: Խոսքը ներկրվող ապրանքների մասին է: Դոլարի եւ եվրոյի փոխարժեքը շարունակում է ցածր մնալ, իսկ կարագի գինը չի նվազում ու չի նվազում:

ՎԿ-ն կարագի շուկայում մեկ տարվա ընթացքում գրանցել է 3.3, իսկ մեկ ամսվա ընթացքում՝ 0.2 տոկոսի չափով գնաճ: Թանկացել է շոկոլադը, մեղրը: Հրուշակեղենի շուկայում եւս գնաճ է արձանագրվել: Կաթնամթերքը եւս ամնասն չի մնացել թանկացումից: Ոչ միայն թարմ կաթի գինն է բարձրացել, այլեւ պանրինը: Մեկ տարվա ընթացքում պանրի գինը բարձրացել է 22.1 տոկոսով: Տավարի միսը հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, թանկացել է 0.9 տոկոսով. մեկ կիլոգրամի գինը գերազանցում է 3500 դրամը, ցլիկի փափուկ մսի մեկ կիլոգրամը վաճառվում է 5350 դրամով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեկ ամսվա ընթացքում խոզի, գառան մսի, թռչնամսի գինը թեկուզ չնչին, բայց նվազել է: Օրինակ՝ թռչնամսի եւ խոզի մսի շուկայում արձանագրված գնանկումը կազմել է 1.3 տոկոս: Եթե մեկ տարվա կտրվածքով նայենք, ապա գառան միսը թանկացել է 5.2 տոկոսով: Ձուն թանկացել է 2.9 տոկոսով: Շաքարավազի շուկայում գրանցված գնաճը կազմել է 2.6 տոկոս: Ձեթն է էժանացել 3.3 տոկոսով: Ցիտրուսային մրգերի գները եւս հոկտեմբերին նվազել են 14.6 տոկոսով:

Բանջարեղենի շուկայում հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է 3.6, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 4.5 տոկոս գնաճ:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՋԱԿՑԵՆ

165 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Արժույթի միջազգային հիմնադրամը կաջակցի Հայաստանի կառավարության տնտեսական ծրագրին, որպեսզի երկիրը կարողանա ներդրումների, արտահանման վրա հիմնված տնտեսական աճ արձանագրել՝ միաժամանակ պահպանելով մակրոտնտեսական, հարկաբյուջետային եւ ֆինանսական կայունությունը:

Արժույթի միջազգային հիմնադրամից հայտնում են, որ Հայաստանի հետ պայմանավորվածություն են ձեռք բերել 3-ամյա համաձայնագիր կնքելու վերաբերյալ, որը դեռեւս ենթակա է Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր խորհրդի հաստատմանը. ակնկալվում է, որ հարցը կքննարկվի 2022 թվականի դեկտեմբերին:

Նշվում է, որ Հայաստանի իշխանությունների խնդրանքով Արժույթի միջազգային հիմնադրամի աշխատակիցների խումբը 2022 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 6-ը եղել է Երեւանում՝ ուսումնասիրելու երեքամյա տնտեսական ծրագիրը: Հայաստանում ունեցած հանդիպումներից եւ քննարկումներից հետո Հայաստան ժամանած ԱՄՀ պատվիրակության ղեկավար Իվա Պետրովան հայտարարել է, որ Հայաստանն ու Արժույթի միջազգային հիմնադրամը համաձայնության են հասել համաձայնագրի շուրջ, որը ենթադրում է շուրջ 165.6 միլիոն դոլարի հատկացում Հայաստանին՝ մակրոտնտեսական, ֆիսկալ եւ ֆինանսական կայունության ապահովմանն ուղղված տնտեսական ծրագրին աջակցելու համար:

Արժույթի միջազգային հիմնադրամը 2022 թվականին Հայաստանի համար 11 տոկոս տնտեսական աճ է կանխատեսել՝ արտաքին եկամուտների, կապիտալի եւ աշխատուժի ներհոսքի հաշվին: Նշվում է նաեւ, որ դրամի արժեւորումը հանգեցրել է երկրի պետական պարտքի նվազմանը, որն այս տարվա արդյունքներով կկազմի ՀՆԱ-ի 51 տոկոսն այն դեպքում, երբ 2021 թվականին պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 60.3 տոկոսը:

Միեւնույն ժամանակ ակնկալվում է, որ 2023 թվականին տնտեսական աճը կդանդաղի եւ միջնաժամկետ կտրվածքով կմնա 4-5 տոկոսի միջակայքում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Կառավարությունը միջոցներ կհատկացնի Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու եւ Հաղպատ վանական համալիրի նորոգման նպատակով:

«Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու պատերից մեկը գտնվում է վթարային վիճակում եւ վերականգնման կարիք ունի»,-երեկ՝ նոյեմբերի 3-ին, կառավարության նիստում ասաց ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից պատրաստվել է եկեղեցու պատի նորոգման եւ ամրակայման նախագիծը, ներկայացվել նախարարություն: Աշխատանքների համար պահանջվող ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է 8 միլիոն 285 հազար դրամ: Նախարարության կողմից հայտարարվել է մրցույթ, կնքվել են կապալի եւ տեխնիկական հսկողության համապատասխան պայմանագրեր: Գումարը հատկացնելուց հետո կսկսվեն աշխատանքները»,- ասաց նախարարը:

Նախագծով նախատեսվում է 2 միլիոն 771 հազար դրամ էլ հատկացնել Հաղպատ վանական համալիրի արեւմտյան պարսպապատի եւ աշտարակների վերանորոգման համար անհրաժեշտ գիտանախագծային փաստաթղթերի մշակման եւ փորձաքննության համար:

«Հաղպատ վանական համալիրի արեւմտյան պարսպապատի աշտարակներից մեկից վերջին մի քանի երկրաշարժից հետո քարաթափումներ են եղել, առկա են մեծ ճաքեր: Առկա է փլուզման վտանգ: Վնասվածքներ կան նաեւ մյուս աշտարակների եւ պարսպի որոշ հատվածների վրա»,- հայտնեց նախարարը:

ԳՐԵԹԵ ԱՎԱՐՏԵԼ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի ճանապարհաշինական աշխատանքները, որոնք իրականացվում են ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին, արդեն ավարտի են հասցվել մոտ 70 տոկոսով:

Աշխատանքները մեկնարկել են 2022 թվականի հունիսի 15-ին: Ճանապարհաշինական ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 530 միլիոն դրամ: Սայաթ-Նովա փողոցում նախատեսվում է հիմնանորոգել 2,5 կիլոմետր երկարությամբ եւ 18 հազար 300 քմ մակերեսով ճանապարհ, որի ողջ երկայնքով կառուցվում է նոր կոյուղագիծ, երկկողմանի սալիկապատվում են մայթերը՝ 7000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Ճանապարհից ամբողջությամբ հեռացվել է հին ասֆալտբետոնե շերտը, փոխարենը տեղադրվում է նոր ասֆալտբետոնե երկշերտ ծածկ: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել մինչեւ տարեվերջ:

2022 թվականի նոյեմբերի 3-ի դրությամբ արդեն ամբողջությամբ ավարտվել է կոյուղագծի կառուցումը, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկը տեղադրվել է շուրջ 1,5 կիլոմետր երկարությամբ, իսկ մայթերի սալիկապատումը կսկսվի կոյուղու ցանցի տնային միացումների ավարտից հետո:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

13 ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ ԿԿԱՌՈՒՑՎԵՆ

Կառավարությունն իր երեկվա՝ նոյեմբերի 3-ի նիստում որոշեց ԿԳՄՍ նախարարության 2022 թվականի բյուջեով նախատեսված ելքային ծրագրերի շրջանակներում կատարել վերաբաշխում՝ 62 մլն դրամ գումարի չափով, ինչպես նաեւ մոտ 140 մլն դրամն ուղղել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ:

Վերաբաշխումն իրականացվում է Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերից ընտրված 10 բնակավայրի դպրոցների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եւ փորձաքննության, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցի եւ ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոցի մոդուլային շենքերի կառուցման ավարտական աշխատանքների, ինչպես նաեւ Ախուրյանի ավագ դպրոցի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության գործընթացի ապահովման համար:

ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերից ընտրված թվով 13 բնակավայրերի դպրոցների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եւ փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ կառավարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացրել է համապատասխան գումար: Սկզբնական փուլում վերլուծությունների արդյունքում նախատեսվել է 13 կրթահամալիրից 5-ի համար կառուցել նոր շենք, որոնցից 3-ի համար՝ մոդուլային, իսկ մյուս 8-ի համար պետք է վերակառուցվեին դպրոցների առկա շենքերը:

Վերակառուցվող դպրոցներ

«Աճանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Օխտարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Ճակատենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Կառուցվող դպրոցներ

«Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

«Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Կառուցվող մոդուլային դպրոցներ

«Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Դավիթ Բեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշեց, որ կրթական բարեփոխումների շրջանակներում կրթական գործընթացների կազմակերպման մասով այլեւս ձեւավորվել է նոր մոտեցում, եւ նախկինում գործող բազմահամակազմ դասարանների նախատեսման սկզբունքը՝ 2 կամ 3 դասարանները մեկ դասարանում համակցելու մոտեցումը, այլեւս ընդունելի չէ:

«Նոր մոտեցմամբ, անկախ աշակարտների թվաքանակից, նոր կրթական կենտրոնները, ինչպես նաեւ հետագայում նախատեսվող դպրոցները պետք է նվազագույնն ունենան հետեւյալ կազմը.

առնվազն 12 դասարան, 1 նախնական զինվորական պատրաստության դասասենյակ, /1 արհեստագործական սենյակ/, 1 կենսաբանության եւ քիմիայի դասասենյակ-լաբորատորիա, 1 ֆիզիկայի եւ աշխարհագրության դասասենյակ-լաբորատորիա, 1 հանդիսությունների դահլիճ, կերպարվեստի դասերի անցկացման վայր, սպորտային դահլիճ, 1 ռեսուրսային (ինֆորմատիկա, տեխնոլոգիաներ) կենտրոն, որը կգործի նաեւ որպես գրադարան, խոհանոց՝ նախատեսված դպրոցական եւ նախադպրոցական տարիքի սովորողների սննդի պատրաստման համար՝ 2 առանձին ճաշասենյակներով, ընդարձակ ուսուցչանոց, 1 տնօրենի սենյակ, 1 փոքր խոհանոց, 1 պահակակետ, 1 տեխնիկական սենյակ, 1 մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման եւ առաջին բժշկական օգնության տրամադրման սենյակ:

Մասնավորապես՝ նախատեսվում է դասասենյակները տրոհել մինչեւ 12 աշակերտ/տեղ, նախագծի երկրորդ հարկը փոքր ինչ ընդլայնել, ինչը կապահովի 2 լրացուցիչ դասասենյակների տեղակայումը, ինչպես նաեւ նախատեսվում է նույն ճարտարապետական լուծումներով կցակառույց, որտեղ նախատեսվում է տեղակայել 2-4 խմբանի նախադպրոցական բլոկ»,-ասաց նախարարը:

Նրա խոսքով՝ 10 կրթահամալիրներում այս պահանջներին համապատասխանող փոփոխությունների փոխարեն նախատեսվում է կիրառել նոր տրամաբանությամբ միայն մոդուլային կրթահամալիրների համար լրամշակված նախագծի տեղակապում հետեւյալ բնակավայրերի կրթահամալիրների համար՝ Աճանան, Օխտար, Արծվանիկ, Գեղանուշ, Սյունիք, Ծավ, Եղեգ, Ճակատեն, Ներքին Հանդ, Շիկահող:

«Այս բոլոր բնակվայրերում պետք է լինեն նոր մոդուլային դպրոցներ: Այս դպրոցները լինելու են նաեւ համայնքային մշակութային կենտրոններ: Այսպիսով բոլոր 13 բնակավայրերում կկառուցվեն միայն մոդուլային կրթահամալիրներ:

Նախագծով նախատեսվում է նաեւ միջոցներ հատկացնել ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոցի եւ Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոցի կառուցման ավարտական աշխատանքների համար: Դպրոցների կառուցումը մեկնարկել է 2020թ.-ին եւ նախատեսվում է ավարտել այս տարի:

Նախագծով գումար է հատկացվում նաեւ Ախուրյանի ավագ դպրոցի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության գործընթացի ապահովման համար»,- ընդգծեց Դումանյանը:

ՎԵՐԱՆԱՅՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը նոր շարադրմամբ հաստատելու մասին Կառավարության որոշման նախագիծը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ 2021 թվականին Ազգային ժողովն ընդունել է «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունները, որոնցով հանրակրթության ոլորտի 4 հիմնական ուղղություններով վերանայվել են համապատասխան մեխանիզմներն ու մոտեցումները, այն է՝ նոր բովանդակություն 12-ամյա կրթությանը, համընդհանուր ներառականություն, դասավանդողների մասնագիտական զարգացում եւ դպրոցական կառավարման բարելավված համակարգ: Հաստատությունների կառավարման համակարգի բարելավման գործընթացի շրջանակում, մասնավորապես, գործադիր երկու մարմինների գործառույթները տարանջատվել են:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել կարգավորումներ տալ տնօրենի եւ վարչատնտեսական համակարգողի գործառույթները սահմանող դրույթներում, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, կանոնադրության որոշ դրույթներում կատարել հստակեցումներ: ՊՈԱԿ-ների կանոնադրության ներկայացվող նախագծով հաստատությունների կառավարման համակարգի գործընթացում առավել ճկուն եւ արդիական մոտեցումներ են ներդրվում: Կիրառելով նոր գործիքակազմեր՝ երկու գործադիր մարմիններին հնարավորություն է ընձեռվում իրենց լիազորությունների շրջանակում հաստատությունն արդյունավետ կառավարել, կրթական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով համագործակցել, ինչպես նաեւ իրականացնել աշխատանքի բաշխում եւ վերահսկում: Այսպիսով, նախագծի ընդունման պարագայում հաստատություններում կբարձրանա գործընթացի կազմակերպման արդյունավետությունը եւ հնարավորինս անխոչընդոտ կընթանա դպրոցի կառավարման, խորհրդակցական մարմինների, կրթական գործընթացի մասնակիցների գործառույթների իրականացումը: Կհստակեցվեն նաեւ դպրոցի սեփականության, նրան ամրացված գույքի եւ ֆինանսատնտեսական գործունեության, դպրոցի վերակազմակերպման եւ լուծարման հետ կապված իրավահարաբերությունները: Համաձայն որոշման նախագծի՝ բոլոր այն հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կանոնադրություններում, որոնք անցում են կատարում «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի, անցում կատարելուց հետո՝ եռամսյա ժամկետում, պետք է կատարվեն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ: Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ նոյեմբերի 9-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԻՆՈ

«ԱՎՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ» ԿՑՈՒՑԱԴՐՎԻ

«Ավրորայի լուսաբացը» անիմացիոն-վավերագրական ֆիլմը նոյեմբերի 3-17-ը կցուցադրվի Երեւանյան կինոթատրոններում. այս մասին տեղեկացրին Հայաստանի ազգային կինոկենտրոնից:



«Ֆիլմի հայաստանյան պրեմիերան տեղի է ունեցել դեռեւս հուլիսին՝ երեւանյան «Ոսկե Ծիրանի» օրերին՝ մասնակցելով փառատոնի միջազգային մրցութային ծրագրում, որտեղ եւ արժանացել է «Արծաթե ծիրան» մրցանակին: «Ավրորայի լուսաբաց» անիմացիոն-վավերագրությունը համատեղ արտադրություն է՝ Հայաստան-Գերմանիա-Լիտվա: Կինոնկարը ֆինանսական աջակցություն է ստացել Հայաստանի ազգային կինոկենտրոնից եւ եվրոպական ամենախոշոր կինոֆոնդից՝ «ԵՎՐԻՄԱԺ»-ից (Հայաստանը՝ որպես մեծամասնական համարտադրող):

«Ավրորայի լուսաբացը» անիմացիոն-վավերագրությունը՝ Հայկական ազգային կինոակադեմիան ընտրել է «Օսկար» մրցանակաբաշխության «Լավագույն արտասահմանյան ֆիլմ» անվանակարգում ներկայացնելու համար:

«Ավրորայի լուսաբացը» ֆիլմը նոմինացվել է Asia Pasific Screen Award (Ասիա-Խաղաղօվկիանոսյան էկրանավորման մրցանակ) մրցանակաբաշխության լավագույն անիմացիոն ֆիլմ անվանակարգում: Այդ անվանակարգում մրցելու են 5 ֆիլմեր: Մրցանակաբաշխության արդյունքները հայտնի կդառնան նոյեմբերի 9-11-ը Ավստրալիայի Բրիսբեն քաղաքում: Այս չափազանց բարձրակարգ կինոստուգատեսը Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում «Օսկար»-ին համարժեք մրցանակաբաշխություն է, որտեղ ընտրվում եւ մրցանակի են արժանանում լավագույն ֆիլմերը:

Կինոնկարն ընդգրկվել է (նոյեմբերի 18) Tallinn Black Nights կինոփառատոնի Baltic մրցութային ծրագրում, ինչպես նաեւ Ամստերդամի հայտնի վավերագրական փառատոնի (IDFA) Best of Fests ծրագրում: Ֆիլմի համարտադրող երկրում՝ Լիտվայում, պրեմիերան կկայանա Scanorama փառատոնի օրերին՝ նոյեմբերի 19-ին»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Աղբյուրը հիշեցնում է, որ հոկտեմբերի 23-ին տեղի է ունեցել ֆիլմի ամերիկյան պրեմիերան (ANIMATION IS FILM փառատոնի մրցութային ծրագրում) Հոլիվուդյան պատմական Չինական թատրոնում: Ֆիլմն արժանացել է «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին: Դեռեւս հոկտեմբերի սկզբին ֆիլմն ընդգրկված է եղել նաեւ FilmFest Hamburg կինոփառատոնի «Կալեյդոսկոպ» մրցութային ծրագրում եւ DocLisboa փառատոնի «Երկրից լուսին» ծրագրում:

««Ավրորայի լուսաբացը» ֆիլմի պրեմիերան տեղի է ունեցել անիմացիայի աշխարհի ամենամեծ փառատոնի՝ «ԱՆՍԻ»-ի մրցութային ծրագրում: Սա աշխարհի ամենամեծ անիմացիոն փառատոնն է, որը ոչ պաշտոնապես համարվում է անիմացիայի Կաննը:

«Ավրորայի լուսաբացի» համաշխարհային պրեմիերայից եւ միջազգային ցուցադրություններից հետո արտասահմանյան մամուլն ու փառատոնային կայքերը շարունակում են հանդես գալ ֆիլմի մասին հրապարակումներով՝ անդրադառնալով 100 տարի առաջ թուրքական պետության իրականացրած ցեղասպանությանը, որի հետեւանքով իր բնօրրանում ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր»,- հայտնում են Հայաստանի ազգային կինոկենտրոնից՝ ներկայացնելով Los Angeles Times-ի անդրադարձը: «Հայոց ցեղասպանության մասին պատմող «Ավրորայի լուսաբացը» ֆիլմը ներառվել է 2022 թվականի Animation Is Film «5 պարտադիր դիտման ֆիլմերի» ցանկում: Aurora's Sunrise-ը հիբրիդային վավերագրական ֆիլմ է, որը ներկայացնում է Ավրորա Մարդիգանյանի կյանքը անիմացիայի միջոցով»,-գրում է Los Angeles Times-ը, որի փոխանցմամբ՝ 1901 թվականի հունվարի 12-ին Արեւմտյան Հայաստանում ծնված Ավրորա Մարդիգանյանի պատմությունը դարձավ Մերձավոր Արեւելքի օգնության ֆոնդի զանգը Հայոց ցեղասպանության ժամանակ: Ավրորա Մարդիգանյանի պատվին «Ավրորա» մրցանակը սահմանվել է որպես մարդասիրական մրցանակ, որը հիմնադրվել է Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկիչների»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶՈՅԱՆ

«ՀՈԳՆԵԼ ԵՄ ԲՈԼՈՐԻՑ»

Դերասան Հովհաննես Ազոյանը, որը մեստաղ հայտնվում է սկանդալների կիզակետում, վերջին շրջանում այնքան էլ ակտիվ չէ: ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել դերասանի հետ՝ պարզելու համար, թե ինչ զբաղվածություն ունի այս պահին եւ ինչ գործունեություն է ծավալում:

Վերջինս, մեր հարցադրումներին ի պատասխան, ասաց. «Այս պահին հարցազրույց չեմ տալիս, հանգստանում եմ, հոգնել եմ բոլորից, ինձանից պատասխան չեք կարող ակնկալել»,- կարճ, բայց ժպիտով նշեց մեր զրուցակիցը:

Հիշեցնենք, որ Հովհաննես Ազոյանը ակտիվորեն մասնակցել է 2018թ. հեղափոխությանը, ավելին՝ մշտապես աչքի է ընկել քաղաքական դիրքորոշումներով եւ հայտարարություններով:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Իտալիայի չեմպիոն «Միլանի» ղեկավարությունը նոր պայմանագիր կառաջարկի աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Օլիվիե Ժիրուին:

36-ամյա ֆուտբոլիստի գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Կողմերը բանակցությունները կսկսեն նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 18-ը՝ Քաթարում անցկացվելիք աշխարհի առաջնությունից հետո:

Ժիրուն գոհ է պայմաններից Միլանում եւ դեմ չէ համագործակցության երկարաձգմանը:

Ընթացիկ մրցաշրջանում Ժիրուն «Միլանի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 17 հանդիպման, խփել 8 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկնաբանել է իսպանական «Սեւիլիայի» նկատմամբ 3:1 հաշվով հաղթանակը եւ ամփոփել խմբային փուլը: Մանչեսթերյան թիմը նվաճել է 1/8 եզրափակիչի ուղեգիր, «Սեւիլիան» խմբում գրավել է երրորդ տեղը եւ պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայի 1/16 եզրափակիչում:

«Մեր երիտասարդ խաղացողները գերազանց արդյունքի հասան փորձառու «Սեւիլիայի» հետ դիմակայությունում:

20-25 տարի իսպանական ակումբները գերիշխել են Եվրոպայում: «Բարսելոնան», «Ռեալը», «Աթլետիկոն», «Սեւիլիան», «Վալենսիան» միշտ եղել են եվրագավաթային մրցաշարերում: Այս տարի այնքան էլ հաջող չխաղացին: Այսպիսին է ֆուտբոլը: Սա ձախողում չէ, նրանք փորձեցին, բայց չստացվեց: Հաջորդ տարի նրանք ավելի ուժեղ կվերադառնան:

Չեմպիոնների լիգան շատ բարդ մրցաշար է: Կարճ ժամանակահատվածում պետք է շատ ուժ ներդնես: Մեկ կամ երկու սխալը կարող է վճռական լինել: «Բարսելոնան», «Յուվենտուսն» ու «Աթլետիկոն» գերազանց թիմեր են, բայց դուրս մնացին: Լինում են վերահսկողությունից դուրս իրավիճակներ»,-ասել է Գվարդիոլան:

Իսպանական ակումբներից Չեմպիոնների լիգայի փլեյ-օֆֆ է դուրս եկել միայն Մադրիդի «Ռեալը», որը պաշտպանում է տիտղոսը:

ՎԱՏԱԳՈՒՅՆ ՄՐՑԵԼՈՒՅԹ

Թուրինի «Յուվենտուսը» վատագույն մրցելույթն ունեցավ Չեմպիոնների լիգայում ակումբի պատմության մեջ: Իտալացի Մասիմիլիանո Ալեգրիի գլխավորած թիմը խմբային փուլի 6 խաղից 5-ում պարտություն կրեց եւ միայն մեկ անգամ պարտության մատնեց իսրայելական «Մաքաբի Հայֆային»:

Վերջին տուրում «Յուվենտուսը» տանը 1:2 հաշվով պարտվեց Ֆրանսիայի չեմպիոն Փարիզի ՊՍԺ-ին: H խմբում «Յուվենտուսն» ու «Մաքաբին» վաստակեցին 3-ական միավոր: «Յուվենտուսը» երրորդ տեղը գրավեց եւ Եվրոպայի լիգայի 1/16 եզրափակիչի ուղեգիր նվաճեց գոլերի տարբերությամբ:

● *Նոյեմբերի 5-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն՝ սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է կատարվում անտառի վնասատուների եւ հիվանդությունների կանխարգելումը:

Կարինե Սարգսյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անտառի վնասատուների եւ հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը պետական անտառներում կենտրոնացված կարգով կազմակերպում է պետական կառավարման լիազորված մարմինը:

Աշխատանքներն իրականացվում են անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա:

Անտառի վնասատուների եւ հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքներում կիրառվում են անտառային էկոհամակարգերի եւ շրջակա միջավայրի նկատմամբ նվազագույն բացասական ազդեցություն ունեցող եղանակները եւ մեթոդները: Նախապատվությունը տրվում է վնասատուների ու հիվանդությունների վնասակարության կանխարգելման կենսաբանական եղանակներին:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անտառի վնասատուների եւ հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքներն իրականացվում են սույն օրենսգրքի ու խնամքի սանիտարական հատումների իրականացման կարգի համաձայն:

Էջը՝ ՌՈՁԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարո՞ղ եմ կուտակել մի քանի ամսվա կենսաթոշակս, այնուհետեւ, անկանխիկ գնումներ կատարելով, ստանալ ոչ թե ամեն ամսվա կենսաթոշակի 10% հետվճարը, այլ կուտակված գումարի 10%-ի չափով հետվճար:

Նաիրա Հունանյան (65 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, սակայն մեկ ամսվա ընթացքում 50,000 դրամից ավելի գնումների դեպքում արդեն հետվճար չի հաշվարկվի: Կենսաթոշակի 10% հետվճար ձեւավորվում է անկանխիկ ցանկացած վճարումից, այդ թվում՝ դեղատներում, հիվանդանոցներում, հագուստի խանութներում, սննդի կետերում եւ այլն:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի 10% հետվճարի ծրագրին միացել են «ՎՏԲ Հայաստան» բանկ, «Արդշինբանկ», «Հայբիզնեսբանկ», «Ակբա» բանկ գործընկեր կազմակերպությունները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Մելիք Ադամյան եւ Նալբանդյան փողոցների խաչմերուկում՝ Ֆինանսների նախարարության հարեւանությամբ, անհայտ հանգամանքներում հրդեհ է բռնկվել Kia մակնիշի ավտոմեքենայում: Տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: